

## ԱՅՑ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ՀՀ մշակույթի նախարարության կողմից հավատարմագրված հանրային գրադարանի կարգավիճակ ստացած հաջորդ գրադարանը Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային գրադարանն է:

Հուլիսի 14-ին Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեններ Ռազմիկ Առաքելյանը, Հասմիկ Ղազարյանը և Միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը այցելեցին Դիլիջանի քաղաքային գրադարան՝ տեղում ծանոթանալու գրադարանի վիճակին և խնդիրներին: Տեղի ունեցավ խորհրդակցություն գրադարանի խնդիրների շուրջ, նվիրաբերվեց 55 միավոր գրականություն Ազգային գրադարանի գրքափոխանակության ֆոնդից և 66 միավոր Անտարես հրատարակչության կողմից: